

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

*I* – տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը վարկառուի ընդհանուր ծախսն է, արտահայտված տրամադրված

վարկի տարեկան տոկոսով, և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում:

*A* – սպառողին տրամադրվող վարկի սկզբնական գումարն է:

*n* – վարկի մարմանն ուղղված վճարի թիվը:

*N* – վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը. *K<sub>n</sub>* – վարկի մարմանն ուղղված *n*-րդ վճարի գումարը. *D<sub>n</sub>* – վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված *n*-րդ վճարի կատարման օրը ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով:

**Փաստացի տարեկան տոկոսադրույքի հաշվարկի օրինակ.**

Դիցուք հաճախորդին տրամադրվում է 100,000,000 ՀՀ դրամ գումարի չափով բնակարանի ձեռքբերման վարկ, 180 ամիս մարման ժամկետով, տարեկան 12,5% տոկոսադրույքով, անուիտետային մարման կարգով:

Հաճախորդի ծախսերն են՝

Հայտի քննարկման վճար՝ 10,000 ՀՀ դրամ

գրավի գնահատման վճար՝ 15,000 ՀՀ դրամ,

գրավադրման վճար՝ 94,000 ՀՀ դրամ:

Վարկային փաթեթի միանվագ սպասարկման վճար՝ 100,000 ՀՀ դրամ

Տվյալ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի՝ 13.31% :

**Փաստացի տարեկան տոկոսադրույքի հաշվարկի օրինակ.**

Դիցուք հաճախորդին տրամադրվում է 300.000 ԱՄՆ դոլար գումարի չափով բնակարանի ձեռքբերման վարկ, 180 ամիս մարման ժամկետով, 1-5 տարի՝ 8.99% (ութ ամբողջ իննսունինը հարյուրերորդական) տոկոս, այնուհետև 7% (յոթ) + 6 (վեց) ամսական LIBOR-ի, անուիտետային մարման կարգով:

Հաճախորդի ծախսերն են՝

Հայտի քննարկման վճար՝ 1.000 ՀՀ դրամ

գրավի գնահատման վճար՝ 15.000 ՀՀ դրամ,

միասնական տեղեկանքի վճար՝ 10.000 ՀՀ դրամ,

գրավադրման վճար՝ 94.000 ՀՀ դրամ:

Վարկային փաթեթի միանվագ սպասարկման վճար՝ 100.000 ՀՀ դրամ

Գույքի Ապահովագրություն վարկի մնացորդից՝ 216.000 ՀՀ դրամ

Տվյալ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի՝ 9.4% :